Ամփոփ նյութ

«ՖԱՍԹ ՇԻՖԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ «ՖԱՍԹ ՇԻՖԹ» ՍՊԸ նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ վճարահաշվարկային կազմակեպությունների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտումներ թույլ տալու համար:

Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՈՐՈՇՈՒՄ
12.04.2024Թ. ԹԻՎ 1/18 ԾՕՀԱ
«ՖԱՍԹ ՇԻՖԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ
ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սույն որոշման նկարագրական մասի 1-ին կետում նկարագրված խախտումը թույլ տալու համար Ընկերության նկատմամբ կիրառել տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով, ինչպես նաև նախազգուշացում՝ խախտումը եռամսյա ժամկետում վերացնելու, ապագայում նման խախտումները բացառելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարականներով.

2. Սույն որոշման նկարագրական մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում նկարագրված խախտումները թույլ տալու համար Ընկերության նկատմամբ կիրառել տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով, ինչպես նաև նախազգուշացում՝ ապագայում նման խախտումները բացառելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարականներով.

3. Սույն որոշման նկարագրական մասի 5-րդ կետում նկարագրված խախտումները թույլ տալու համար Ընկերության նկատմամբ կիրառել տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով, ինչպես

նաև նախազգուշացում՝ ապագայում նման խախտումները բացառելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարականներով.

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերություն մուտքագրվելու կամ Ընկերության՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է երկամսյա ժամկետում բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ **ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ**